ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը

Առարկա- Մայրենի

Հեղինակ- Շահանց Ջուլետա Ժորայի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ……..……5
3. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ……...8
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……16
5. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Ամեն դարաշրջումն իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին:

Կրթական նոր քաղաքականությամբ կարևորում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակություն մշակողի, որպես նորարարի: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին վերաբերմունքը, փոխվում է արժեքային համակարգը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի:

Հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը շատ կարևոր գործընթաց է: Դաստիարակելով արժանապատիվ, ազնիվ և հայրենասեր սերունդ՝ կունենանք առողջ հասարակություն և պետականության ամուր հիմքեր, եթե բաց թողնենք ճիշտ արժեքների սերմանումը կունենանք վատ հասարակություն: Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը դասվարի կարևորագույն գործառույթն է:

Աշխատանքում **նպատակ է** դրվել վեր հանել արժեքային համակարգի կարևորությունը և բացահայտել կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման արդյունավետ մեթոդներ և հնարներ:

Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ **խնդիրները.**

- բացահայտել տարրական դասրաններում դասավանդվող առարկաների արժեքային ներուժը,
- ուսումնասիրել տարրական դասարաններում արժեքային համակարգի ձևավորման մեթոդական մշակվածության աստիճանը գիտական գրականության մեջ,

- ներկայացնել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակային և գործնական կողմերի միասնության ապահովման ու մեթոդական հնարավորությունները:

Աշխատանքի **կիրառական նշանակությունը** պայմանավորված է նրանում առկա դասի պլանով, որտեղ ներկայացված են արժեքային համակարգի ձևավորմանը միտված նպատակային մեթոդներն ու հնարները, որոնք էլ օգտակար կլինեն մանկավարժների և մանկավարժական բուհում սովորող ուսանողների համար:

Հետազոտության արդյունքներն ամփոփված են աշխատանքի <<Եզրակացություն>> բաժնում:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐ

Կրտսեր դպրոցի հիմնահարցերից կարևորագույնը բարոյական ժառանգությունը նոր սերնդին փոխանցելն է և արժեհամակարգի հիմքում նոր արժեքներ սերմանելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտությունը հաստատելը: Դասավանդման ընթացքում ուշադրություն դարձնելով կարևորագույն արժեքների դիտարկմանը, մեր խնդիրն է օգնել աշակերտներին իմաստավորելու այդ արժեքները, կենսափորձի և հարցադրումների միջոցով որոշել ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում, երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, սակայն տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցնումների խելամիտ միահյուսումը: Արժեքները երեխաներին ներկայացնում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր և առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի և օտար լեզուների առանձնահատկություններով:

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում, տարրական դպրոցում լեզուների ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, նշանակողական, ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման, մտքերի ձևավորման ու արտահայտման, հուզական և այլն:

Հաղորդակցական (կոմունիկատիվ) գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Տարրական ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում, որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում:

Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը, լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցման կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանա լսել, ընկալել, բնավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել:

Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց: Այդ գործառույթը մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները (գիտելիքներ, ճանաչողություն): Գիտելիքը հասարակական փորձով ստուգված իրականություն

տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը:

Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրականացվում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռնում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ:Այն դրսևորվում է սոցիալական, իմացական, գեղագիտական արժեքների ձևով:

Շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում՝ հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական (գիտելիքը՝որպես համամարդկային մշակույթի արտահայտություն), գեղագիտական (գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը՝որպես արժեք):

Հուզական գործառույթը կապված է հույզերի ու զգացմունքների արտահայտման հետ: Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Այն նպատակաուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների հաղորդակցմանը:

Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի՝ այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներն են:Ապրումակցումը ենթադրում է անձի հուզական այնպիսի վիճակներ ու ապրումներ, որոնք նա տածում է դիմացինի նկատմամբ՝ նրա հուզական հոգեվիճակի նույնականացման հիման վրա: Գթասրտությունն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայումն վերաբերմունքի միջոցով:

Կարեկցանքը անձի՝ այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է:

Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում: Այն արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է, որ սոցիալական միջավայրն ընկալվում է որպես արժեք:

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական (մտածողությունը՝ մտքերը ձևակերպելու և

արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք) և գեղագիտական (մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք), արժեքներին հաղորդակցում:

Դպրոցականի բառապաշարի հարստացմանը մեծ հնարավորություն են ընձեռնում ընթերցանության տեքստերը: Դա արտահայտվում է նրա զրույցներում, գրավոր ու բանավոր խոսքի մեջ, գրավոր աշխատանքի տարրեր տեսակներում:

Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությունը և վերջինս առօրյա կյանքում վերաիմաստավորելու նախնական փորձի ձեռքբերմանը:

Մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

Առարկայի դասավանդումը, նոր նյութի հաղորդումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեթոդների, որոնք նաև իրենց դերն ունեն արժեքային համակարգի ձևավորման գործում: Դրանք ազդում են մարդու անձի ձևավորման վրա:

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը. պասիվ, ակտիվ և ինտերակտիվ: Ինտերակտիվ ուսուցման յուրահատկությունն այն է, որ կազմակերպում է այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն

հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության:

Ուսուցման գլխավոր նպատակներից մեկը անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է: Ինտերակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, այնպիսի հետաքրքիր հնարներ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Ըստ Սերոբ Խաչատրյանի՝սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է[1]:

Ուշադրության դրսևորումը համարվում է հետազոտական վարքի, օրգանիզմի հարմարվողական ճանաչողական գործունեության սկիզբը, անհրաժեշտ տեղեկատվության ընտրությունը:

Նախ սա պիտի հաշվի առնենք ուսուցումը կազմակերպելիս և կարևոր էլ չէ, թե ուսուցման որ մոդելի հետ գործ ունենք:Առաջնորդվելով ուսուցման ինտերակտիվ միջոցներով՝կիրառենք դրանք մեթոդների հետ և գրանցենք արդյունավետությունը:

Մեթոդների և հնարների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խմդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ստացած գիտելիքները

Տարրական դասարաններում այս կամ այն դասանյութի ուսումնասիրումը հիմնականում իրականացվում է ընթերցանության միջոցով, որը հնարավորություն է տալիս կազմակերրպել երեխաների ինքնուրույն գործունեությունը և նպաստել նրանց մտածողության, տրամաբանական, հաղորդակցման, համագործակցային ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Սակայն ընթերցանությունը պետք է մշտապես զուգակցել նաև այլ՝ինչպես ավանդական, այնպես էլ նոր՝փոխգործուն կամ ինտերակտիվ մեթոդներով:

[1] Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020, էջ10:

Այս դեպքում աշակերտները ոչ միայն ընթերցում են դասանյութը, այլ նաև նրանում պատկերվող իրողությունները, հերոսների արարքները, հատկանիշները փորձում են կապել համադրել և համեմատել կյանքում, առօրյայում հանդիպող նմանատիպ իրավիճակների, խնդիրների հետ, գնահատել հերոսների արարքները, արտահայտել իրենց վերաբերմունքը այդ ամենի վերաբերյալ, հարցեր տալ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենի առարկայի դասավանդման ընթացքում մենք իրականացնելու ենք հեքքիաթների միջոցով, օգտվելով՝ զրույցի, մտագրոհի, քառաբաժան մեթոդներից:

Դիտակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության-հանրագումարային դասերը, կինո-դասերը, էքսկուրսիոն դասը: Սրանցից առավել գործածականը և արդյունավետը, զրույց-դասն է, որին կանրադառնանք փոքրինչ հանգամանորեն:

Զրույց-դասը կիրառվում է սովորողի մտավոր գործունեությունն ակտիվացնելու նպատակով: Զրույցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռք բերում նոր գիտելիքներ:

Ի հայտ են գալիս սովորողի անհատական առանձնահատկությունները, մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններ:

Զրույցը չի ընթանում խստորեն մշակված պլանով, կիրառվում է ուսումնական գործընթացում այլ մեթոդների հետ զուգակցված:

Ուսուցման գործծընթացի կազմակերպման ընթացքում կիրառվող նորագույն մեթոդները հնարավորություն են տալիս լուծելու սովորողների արժեքային համակարգի ձևավորման և զարգացման խնդիրները:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման և զարգացման նպատակով առարկաների դասավանդման ժամանակ առավել հաճախ օգտագործում եմ <<Քառաբաժան>> մեթոդը:

Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս պարզելու աշակերտների կարծիքը, վերաբերմունքը:Նրանք կատարում են եզրահանգումներ, առաջարկում են լուծումներ փնտրում են ելքեր, կատարում են իրավիճակային համեմատություններ իրենց կենսափորձի հետ: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում շատ են այն դասանյութերը, որոնք հնարավորություն են տալիս կիրառել այս մեթոդը զարգացնելով աշակերտների արժեքային համակարգը: Այս մեթոդը բավականին հետաքրքիր է, հարմար է աշխատելիս: Անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար մուտքագրել աղյուսակի չորս բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին[2]:

Աշակերտի բոլոր զգայարանները մասնակցում են դասի ընկալման ընթացքին: Աշակերտը տեսնում է, լսում է, զգում է, կարծիք է կազմում, դիրքորոշում է հայտնում: Նա հասկանում է, որ պետք է լինի արդարամիտ, ազնիվ,գթասիրտ,ներողամիտ,հարգի ուրիշների կարծիքը, գիտակցի իր պարտականությունները ծնողների, ընկերների, համայնքի ու հայրենիքի նկատմամբ և մայրենիի դասագրքում ներառված նյութերը տալիս են այդ հնարավորությունը զարգացնելու աշակերտի արժեքային համակարգը: Նման դասանյութերի ուսումնասիրության ժամանակ հաճախ եմ օգտագործում քառաբաժանի մեթոդը: Ամեն անգամ այս մեթոդի կիրառումից հետո տեսնում եմ, թե դասից առաջ և հետո ինչպես են փոխվում աշակերտները: Նրանք դառնում են ավելի ազնիվ, ավելի հարգալից, ավելի արդարամիտ, ավելի հանդուրժող, ավելի ընկերասեր, ավելի մարդասեր, ավելի հայրենասեր…

Այս ավելիների շարքը երկար կարելի է շարունակել,բայց յուրաքանչյուր այս <<ավելին>>, որ ամեն դասի ընթացքում ստանում է մեր աշակերտը նպաստում է մեր վերջնական նպատակի իրականացմանը այն է բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերնդի ձևավորմանը:

Մայրենիի դասագրքում ընդգծված դասանյութերը հնարավորություն են տալիս զարգացնելու աշակերտների արժեքային համակարգը կիրառելով

[2] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, ինչպես պլանավորել մայրենիի դասը:

քառաբաժան մեթոդը: Ուսումնական տարվա ընթացքում կիրառել եմ քառաբաժանի մեթոդը կշռադարման փուլում:

Սովորողների հետ աշխատանքում չափազանց կարևոր է ընտրել հաղորդակցման նրանց լեզուն, մեթոդները, այսինքն՝ խոսել նրանց լեզվով:Այդ պատճառով, հեքիաթները սովորողների հետ շփման արդյունավետ միջոցներից մեկն են համարվում:Հեքիաթը սովորողի հոգեկան զարգացման համար այնպիսի կարևոր միջոց է, ինչպիսին որ խաղն է: Սովորողի ծանոթացումն արտաքին աշխարհի և մարդկանց փոխհարաբերությունների հետ սկսում է մանկական հեքիաթներով:

Ժամանակից սովորողին բավարար չէ պարզապես հեքիաթ կարդալը, զրուցել բովանդակության և նրա հերոսների մասին: Անհրաժեշտ է նրանց սովորեցնել բացահայտել հեքիաթում թաքնված իմաստները և կրանքի դասերը: Հետաքրքիր է Ի. Վաչկովի տեսակետը, համաձայն որի հեքիաթները օգտագործում են և բժիշկները, և հոգեբանները, և մանկավարժները և յուրաքանչյուր մասնագետ հեքիաթը կիրառում է որպես այնպիսի ռեսուրս, որը կօգնի լուծել իրենց մասնագիտական խնդիրները:

Մարդու կյանքում դպրոցական տարիքը այն շրջանն է, երբ դրվում են անձնային որակների, բարոյական զգացմունքների, գնահատումների հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր լավ ու վատ արարքները: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների, որոնք էլ կարող են արտահայտվել որպես արժեքներ: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիրակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա բարոյական դաստիրակությանը:

Բարոյական դաստիրակության ընթացքը առաջին հերթին ենթադրում է բարոյական որակի ձևավորում: Բարոյական դաստիրակության ընթացքում, բարոյական դաստիրակության հետ մեկտեղ ձևավորվում են անձնային կարևոր

որակներ: Այդպիսի որակներից են, օրինակ՝ բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը, հավատարմությունը, ազնվությունը և այլն: Դպրոցական տարիքում նշված անձնային որակներն ու հատկությունները ձևավորելու տարբեր ուղիներ և մեխանիզմներ կան, սակայն ընդունված լավագույն միջոցներից մեկը սովորողի և գեղարվեստական գրականության, մասնավորապես հեքիաթի, ամուր կապն ապահովելն է: Հեքիաթների դերը սովորողի զարգացման գործում բազմազան է, սկսած երևակայությունը զարգացնելուց միչև ճիշտ խոսքի ձևավորումը: Հեքիաթը սովորողներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Սովորողները ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիրակչական քարոզները: Մանկական հեքիաթները ընդլայնում են սովորողի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել:

Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր, ձևավորվում է նաև հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Դպրոցական տարիքում է ձևավորվում այնպիսի կարևոր զգացմունք, ինչպիսին է ապրումակցումը: Ապրումակցումը այն զգացմունք է, որը հնարավորություն է տալիս երեխային իրապես ապրել հեքիաթի հերոսների կյանքով՝տխրել, երբ հեքիաթի հերոսների հետ դժբախտություններ են կատարվում, իրենց վրա վերցնել հեքիաթի հերոսների կերպարն ու վարքագիծը, ինչն էլ արդեն դաստիրակչական մեծ նշանակություն է ստեղծում, որպեսզի իրական կյանքում ևս իրենք կարողանանք դրսևորել անձնային դրական որակներ, հատկություններ:

Այդ էմպաթիայի զգացողությունը հնարավորություն է տալիս տեղա իրական կյանք սովորողի այն դրական հատկություններն ու որակները,վարքի ընդունված ձևերը, որոնք գովերգում են հեքիաթում: Եվ մեծահասակների օգնությամբ սովորողի մեջ ձևավորվում է հասարակայնորեն ընդունելի վարքի ձևեր և անձնային որակներ կամ դրվում են դրանց հիմքերը:

Ստորև համառոտ կներկայացնենք անցկացրածս դասերից մեկը:

4-րդ դասարանի մայրենի դասի ընթացքում առանձնացրել էինք <<Երկու եղբայր>> հեքիաթը, որը բարության, համերաշխության մասին է: Հեքիաթը ներկայացնելուց հետո աշակերտների հետ անցկացրել եմ զրույց, որի միջոցով ներկայացրել եմ հեքիաթի հիմնական գաղափարը:

<<Սերն ու միությունը թեթևացնում են ամեն ծանրություն>>. այսպես եմ սկսել հեքիաթը: Հեքիաթը երկու աղքատ եղբայրների մասին է: Մի անգամ աշնանը մեծ եղբայրը հաշվում է իր ցորենի պաշարը և մտածում է, որ բերքը շատ է և պետք է եղբորը օգնի: Երբ մութն ընկնում է, նա ցորենի պարկը շալակած տանում է փոքր եղբոր տուն: Ճանապարհին հանդիպում է մի մարդու, բայց քանի որ մութ էր չի ճանաչում: Կրտսեր եղբայրը նույնպես երեկոյան որոշել էր օգնել իր մեծ եղբորը: Նրանք միաժամանակ էին սկսել միմյանց տուն ցորեն տանել: Երբ եղբայրները տուն էին վերադառնում ցորենի պարկերը չէին պակասում:

Իմ մի քանի հարցերին աշակերտները տվեցին տարատեսակ պատասխաններ: Ամփոփելով երեխաների տված պատասխանները, վեր հանելով հեքիաթի հիմնական գաղափարը՝ դասի ընթացքում կարողացա երեխաների մեջ ձևավորել ապրումակցման, ընկերասիրության, մարդասիրության, բարության և այլ անձնային որակներ, որոնք էլ հիմք են հանդիսանալու արժեքային համակարգի ձևավորմանը:

Երեխաները տվեցին մեկը մյուսից հետաքրքիր պատասխաններ, բայց անհրաժեշտ էր պարզել, թե որքան է նրանց խոսքը համապատասխանում նրանց վարքին: Արդյունքները ամփոփելու համար, առաջարկեցի կատարել <<Օգնության ձեռք>> վարժությունը[3], որն օգնում է գիտակցելու, որ լավ փոխհարաբերություններում կարևոր դեր է խաղում փոխօգնությունը, սերն ու միաբանությունը:

Ընթացքը- յուրաքանչյուր աշակերտի բաժանեցի A4 չափսի թուղթ և առաջարկեցի թղթի վրա մատիտով ուրվագծել ձեռքի երկու ափերը, մկրատով կտրել, մեկի վրա գրել իր անունը, իսկ մյուսի վրա՝ այն դասընկերոջ, որը երբևէ օգնել է իրեն: Այնուհետև երեխաները իրենց նկարած երկու ձեռքերը միացրեցին

[3] Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., ինչպես պլանավորել մայրենիի դասը 4, Երևան2017, էջ 295:

ծափ տալու պես,որ գրված անունները մնան ներսի կողմում: Դրսի կողմից գրեցին,թե ընկերն ինչով է օգնել իրեն: Օրինակ՝ <<Ինձ օգնել է բառային աշխատանք կատարելիս>>: Հետո մյուս աշակերտը կարդալ իրեն ցույց տված օգնությունը: Վերջում ամփոփեցի հարցերով.

- Ի՞նչ եք զգում, երբ օգնության կարիք ունեք:
- Ի՞նչ եք զգում, երբ ձեզ են օգնում:
- Ի՞նչ եք զգում, երբ դուք եք օգնում:

Այսպիսով, առաջարկված վարժությունը օգնեց պարզելու, թե որքանով են երեխաները պատրաստակամ օգնելու և զիջելու, բարի գտնվելու միմյանց նկատմամբ:

Այսպիսով, երեխաներն իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ նպաստում են իրականության ճիշտ ընկալման:

Վերջնարդյունք- <Մտագրոհ>> մեթոդով աշակերտները ստեղծեցին <<Լավագույն եղբայր>> հասկացողության մոդելը և համակարգեցին <<Եղբայր>> հասկացության բնորոշ հատկանիշները, որոնք համալրվեցին դրական որակներ որտահայտող նոր բառերով:

կարեկցող

առատաձեռն բարեհոգի

ազնիվ եղբայր ուշադիր

պարկեշտ մարդասեր

սրտացավ գթասիրտ

Դասը ամփոփեցի <<Քառաբաժան>> մեթոդով:

Ի՞նչ տեսա Ի՞նչ զգացի

Ի՞նչ լսեցի Ի՞նչ հասկացա

Օգտագործված մեթոդները՝ զրույց, մտագրոհ, քառաբաժան:

Իրականացման ժամանակահատվածը՝2 դասաժամ:

Թիրախ խումբը և շրջանակը (քանակ, սեռային բաշխում)՝2աշակերտ,

սեռը՝1տղա և 1աղջիկ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով կատարված աշխատանքից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը:

Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Կարող ենք եզրակացնել, որ հեքիաթը գեղարվեստական այն լավագույն ժանրն է, որը կյանքի բոլոր փուլերի համար է և կյանքի յուրաքանչյուր շրջափուլում այն իր ազդեցությունն ու բարոյախոսությունն ունի:

Երբ էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

Մայրենի առարկայի դասավանդման գործընթացի արդյունավետ կազմակերպման հիմքում ժամանակակից մեթոդներն են, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում աշակերտներին ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել վերլուծել ուսումնասիրվող նյութը և դրա հիման վրա, ինքնուրույն որոշում կայացնել, աշխատել խմբերով, տեսնել, սեփական աշխատանքի արդյունքն ու գնահատել այն, կատարել համատեղ խմբային ու համագործակցային աշխատանք, լինել պատասխանատու և հետևողական այդ աշխատանքի համար, գնահատել ինչպես իրենց, այնպես էլ մյուսների կատարած աշխատանքի արդյունքները, առավել ակտիվորեն ներգրավել դասագործընթացում: Վերջիններս էլ նպաստում են ինչպես դասանյութի հեշտ յուրացմանը, այնպես էլ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մայրենի 2-4, ուսուցչի ձեռնարկ, Երևան-2011,էջ 259-260:
2. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ինչպես պլանավորել Մայրենիի դասը 3, Երևան-2017, էջ 499:
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ինչպես պլանավորել Մայրենիի դասը 4, Երևան-2017, էջք 295-300:
4. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Մայրենի 4, դասագիրք, Երևան-2019, էջք 109-111:
5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան,2020, էջ 10:
6. Մանկավարժական միտք, Տաթև գիտակրթական համալիր, 2018, 1-2, էջ 39:
7. Նալչաջյան Ա. Ա. 1997, Հոգեբանության հիմունքներ, Երևան, էջ 56:
8. Պաշարների շտեմարան https://lib.armedu.am
9. https:// library. Fes.delpdf-files/bueros/georgien/16023.pdf